Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Կոտայքի մարզի Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց պատմություն

Թեմա՝ Գարեգին Նժդեհ

Վերապատրաստող, մենթոր՝ Նվարդ Հովհաննիսյան

Ուսուցիչ՝ Անահիտ Ավետիսյան

Երևան 2

Բովանդակություն

1.Ներածություն

2.Գարեգին Նժդեհի փիլիսոփայական մտքերը

3.Գարեգին Նժդեհի մարտական կոչերը

4. Կրթադաստիարակչական նշանակությունը

5.Գրականություն

Ներածություն

Ժամանակ առ ժամանակ մեր պատմության քառուղիներում հայտնվում են անհատներ, որոնք իրենց կյանքի զոհողությունների շնորհիվ կարողանում են փոխել պատմության ընթացքը:Այդ անհատների շարքում, իբրև գաղափարական և կազմակերպչական առաջնորդ, վեր է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը: Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր, հիրավի պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքում:

Գարեգին Նժդեհի կամքի և զինվորական տաղանդի շնորհիվ Սյունիքը կազմեց Հայաստանի բաղկացուցիչ մաս, որը համարվում է Հայաստանի ողնաշարը:

<<Ոչ մի տեղ առանց Սյունիքի և Արցախի: Առանց աշխարհագրական այդ հզոր ողնաշարի , Մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող>>:

Այսօր դժվարին ժամանակաշրջան է մեր պետության համար, մենք կանգնած ենք նոր մարտահրավերների առաջ: Ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ այսօր մեր անկուշտ հարևանը աչք է դրել մեր պատմական տարածքների վրա:

Հարյուր տարի առաջ թուրք - ադրբեջանական ծրագրերում նախատեսվում էր երկու եղբայր պետությունների<< Թուրքիայի և Ադրբեջանի >> միավորում: Իսկ այդ միավորման ճանապարհին առաջնային խոչնդոտ էր Սյունիքը:

<<Թշնամին նպատակադրել էր մեր ժողովրդի մի մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի և Ադրբեջանի միջև տեր դառնալով Սյունաց աշխարհի ու գողթանի բնական ամրություններին, մշտական սարսափի տակ պահել մեր մասաղ հանրապետությանը>>(Գարեգին Նժդեհ): Սյունիքի պաշտպանական կռիվների մասնակիցները մեկ ընդհանուր գաղափարի համար էին մարտնչում, որպեսզի ոչ մի դեպքում և երբեք Սյունիքը չհանձնվի Ադրբեջանին: Սյունիքը մնաց Հայաստանի կազմում սյունաց քաջերի և գաղափարական առաջնորդի շնորհիվ:

Այսօր շարունակվում է եղբայր պետությունների պանթուրքական ծրագրի իրագործումը, եթե մենք կորցնենք Սյունիքը, կհայտնվենք թուրանի աքցանի մեջ և շնչահեղձ կլինենք:

Մենք կորցրեցինք տարածքներ, որոնց կորստի հետ չենք կարող հաշտվել, ունենք անմահացած հերոսներ, որոնց պարտական ենք մեր գոյության ողջ ընթացքում:

Չենք կարող ասել թե այսօր չունենք Նժդեհի նման գործիչներ: Ինչպես չունենք: Մեր բոլոր հերոսացած տղաները դաստիարակված էին Նժդեհի գաղափարներով, այսօրբբէլ սահմանին կանգնած ամեն մի զինվոր մեզ համար Նժդեհ է:

Մնում է միայն համախմբվածություն Նժդեհյան գաղափարներով՝ ԱԶԳ, Հայրենիք, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

<<Կրելով կնիքը Հայաստանի բնության ու պատմության՝ հայ եմ ես: Մտածումով ու ապրումներով, սակայն ես մարդ եմ, Համամարդ>>1:

<<Համամարդ>>, Նժդեհը այդպես է բնութագրել իրեն իր ստեղծագործություններում:Սակայն իր գործունեությամբ նա ապացուցել է որ այդպիսին է և իրականում:

Շատերս գիտենք Նժդեհի մասին, ծանոթ ենք նրա ազգանվեր պայքարին, բայց խորապես չենք ճանաչում նրան, նրա մարդակենտրոն ու ազգակենտրոն գաղափարներին ծանոթ չենք:

Նժդեհն այն մտածողներից է, որի ապագայահոգ մտածումների կենտրոնում մարդն ու հայն են: Մտածող, որի ողջ գործունեությունը դժվարին, բայց ինչ որ առումով ապագայաստեղծ առաքելության յուրօրինակ պատմություն է:

Մտածող, որի շուրջ ավելի շատ աղմուկ կա, քան հիմնավոր խոսք, խեղաթյուրում կա, քան գնահատման ազնվություն: Ամբողջ Խորհրդային ժամանակաշրջանում անտեսվեց և պիտակավորվեց մեծ հայի անունն ու ստեղծագործական ժառանգությունը:

<<Սովետական իշխանության կողմից ինձ վերագրվածները հասարակ հերյուրանքներ են՝ սահմանված ամեն գնով վարկաբեկելու ձգտող պրոպագանդի համար: Ես երբեք չեմ օգտվել արտաքին ուժերից, անգամ հարազատ պետության միջոցներից: առաջնորդվել եմ Մամիկոնյան ուխտով: Եղել եմ խոր հավատքի և էթիկայի մարդ, հավատի տաճարում միշտ առաջին տեղը հատկացված են եղել Աստծուն և Հայրենիքիս>>2:

Նժդեհի մասին Հայաստանում գրեթե բոլորն են խոսում: Շատերը գիտեն որպես միայն նշանավոր ռազմական գործիչ, որոշները գիտեն նրա ցեղակրոն ուսմունքը, բայց չգիտեն որ հայ մտածողն ունի բազմաթիվ գործեր, որոնք հետաքրքրություն են ներկայացնում փիլիսոփայական, բարոյագիտական, մարդաբանական

տեսանկյունից: հաճախ նույնիսկ չհասկանալով ցեղակրոն ուսմունքը, նրա հասցեին մեղադրանքներ հնչեցնում:

Իրականում ցեղակրոն ուսմունքի առաջացումն ու ցեղակրոն շարժման տարածումն ունեին ընդգծված գործնական միտվածության, որը նպատակ ուներ գաղթաշխահի հայության մեջ տիրող ներքին երկպառակությունների, բազմաթիվ ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ էթնիկ ձուլման գործնթացների

կանծումը, ինչպես նաև ջանքեր գործադրել հայկական հարցի հայանպաստ լուծման ուղղությամ

Նժդեհը համոզված էր, որ հայը Հայաստանից դուրս ենթակա է վատասերման: Իսկ դա չարիք է, որի դեմ հնարավոր է պայքարել միայն ցեղային արժեքների, առաքինությունների և սրբությունների խոր ճանաչմամաբ և վերապրմամբ՝ ասել է թե ցեղակրոնությամբ: Վերջինս հայրենասիրական շարժում էր, որի նպատակն էր<<անհայրենիք հայությանը հոգևոր ու քաղքական անտուն - անտիրությունից փրկելով, դարձնել հայրենատեր>>:

Ահա այս ամենն էր ընկած ցեղակրոնության հիմքում, և այն ոչ մի առնչություն չունի նացիստական ուսմունքի հետ:

Գարեգին Նժդեհի փիլիսո Փիլիսոփայական աշխատությունների մեջ ուրույն տեղ ունի մարդաբանական հայացքները: Ազգային կյանքում նվիրական ծառայություն կարող է իրականացնել նա, ով, որպես մարդ չի խուսափել ինքնագերազանցումից, ով կարողացել է ինքնակերտվել որպես կարիք սանձահարող , մարդակործան ցանկություններին <<ոչ>> ասող: Նժդեհը գտնում է, որ չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց և այնպես լավ հայ լինել:

Հայրենիքի և հայրենասիրության թեման ուրույն տեղ է զբաղեցրել բազմաթիվ գրողների, մտածողների ստեղծագործություններում: Բացառություն չէ Նաև Նժդեհը:

<<Հայրենիքս և ես - մենք լծորդված ենք իրար՝ ինչպես հոգի և մարմին, ինչպես նպատակ և միջոց. նա գերագույն նպատակ է, ես՝ միջոց>>:1

Նժդեհը ցավ է ապրում երբ տեսնում է որ հայը թերանում է ինքնաճանաչողության և հայրենաճանաչողության հարցերում:

<<Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Դա ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումովԿարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, Կարելի է հայրենիքում ապրել, բայց և այնպես հոգեհաղորդ չլինել նրան>>:

Նժդեհը արձանագրում է, որ անհայրենասիրություն կարելի է համարել <<գինետնային հայրենասիրությունը>>որը ցավոք տարածվում է այսօր: Այսինքն՝ մենք կարծես հայրենիքի մասին հիշում, հաճախ բարձրաձայնում ենք սեղանների շուրջ, այնպիսի պայմաններում, երբ գիտակցությունը որոշակիորեն իր տեղը զիջում է <<հեղուկադրոշմ>> հուզականությանը: Ձոներ ենք նվիրում հայրենիքին, մինչդեռ ամենօրյա կյանքում անհաղորդ դառնում նրան, շուրթերով հայրենիք սիրում՝ գործերով՝ հայրենիք <<սպանում>>:

Նժդեհի համար դատապարտելի է նաև պայմանական հայրենասիրությունը, քանի որ հայրենիքը պետք է սիրել անկախ իր քաղքական ռեժիմից և մեր քաղաքական համոզմունքներից: Իսկ այսօր մենք ինչպե՞ս ենք սիրում մեր

հայրենիքը, ինչպիսի՞ անտարբերություն ենք ցուցաբերում մեր հայրենիքի նկատմամբ՝ կապված քաղաքական ուժի հանդեպ մեր համակրանքով կամ ատելության գործոնով:

Նժդեհը համոզված է , որ ժողովուրդն առանց հայրենասիրության նման է անհոգի մարմնի: Մենք դատապարտված ենք լինելու հայրենասեր, եթե չենք ցանկանում կորցնել բոլորիտ համար ընդհանուր արևի տակ մեր տեղը : հայրենասեր ազգը վստահ իր բարոյական ուժերին, նա շատ շուտ է ուղղում իր մեջքը՝ վերագրավում իր նախկին դիրքերը, դրությունը:

Այսօր մեզ համար հրամայական է վերգտնել մեր ուժերը, և որպես համախմբված և հայրենասեր ազգ ուղղենք մեր մեջքը, վերականգնենք մեր դիրքերը տարածաշրջանում:

Գարեգին Նժդեհի մարտական կոչերը

Հայը միշտ էլ պատրաստ է պաշտպանել իր հայրենիքը:Հայրենասիրությունը յուրաքանչյուր արյան մեջ է, սակայն լինում է դեպքեր երբ անորոշությունից և դժվարություններից այդ զգացումը որոշ չապովնահանջում է, բայց այդ ժամանակ ասպարեզ իջնում գաղափարական և ռազմական առաջնորդեր և նորից վառվում է հայրենասիրության ջահը:Այդպիսի առաջնորդներից էր Գարեգին Նժդեհը:

<<Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, ադամանդե ճակատ- ահա կատարյալ առաջնորդը>>:

Գարեգին Նժդեհը ծնվել է 1886թ հունվարի 1-ին Կզնուտ գյուղում:Հայրը՝ Տեր Եղիշը Կզնուտի քահանան էր: Սկզբնզկզն կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, այնուհետև Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, ապա Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժնում: սակայն տարվելով ազգային հեղափոխական գաղափարներով, ուսումը կիսատ է թողնում: Նժդեհը 1915-16 թ ժամանակահատվածում մասնակցում է արևմտահայության ազատագրական կռիվներին:

1917թ երբ ռուսական զորքերը դավադրաբար լքում են ռուս- թուրքական ճակատը և հայությանը մենակ են թողնում թուրքական զորքերի դեմ, հուսախաբված ժողովուրդն ու ճակատից փախչող զինվորները ելք չեն գտնում իրենց գոյության համար:

Հենց այդ ժամանակից սկսած փայլում է նժդեհի տաղանդը, որն ի զորու էր համախմբել հուսալքված ժողովրդին և իր մարտական կոչերով ոգևորել և հույսի շող ներշնչել նրանց մեջ:

Նժդեհը իր զինկիցներով մտնու է հայկական գյուղերը, ժողովրդին հավաքում հրապարակները և ճակառժտից փախչող զինվորներին իր ազդեցիկ ճառերով ոգևորում, կազմում ինքնապաշտպանական ջոկատներ և հետը տանում մարտերի:

1917թ. Նժդեհը Գյումրիում մեծ աշխատանքներ է տանում ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման ուղղությամբ՝ հաճախ հանդես գալով դասախոսություններով և ելույթներով: Նրա ելույթների հմայքն ու ազդեցությունը այնքան մեծ են եղել, որ գրեթե բոլոր ելույթներից հետո շատերը, իսկ երբեմն ամբեղջ դահլիճը անդամագրվել են Դաշնակցությանն ու կամավորական ջոկատներին:

Նժդեհի ճարտասանական և հրամանատարական բացառիկ ունակությունները դրսևորվել են նաև Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրեին:

Մեծ զոհերի գնով կոտրելով հայկական սակավաթիվ ուժերի հերոսական դիմադրությունը թուրքական զորքերը մոտեցան Ղարաքիլիսային: Հայոց բանակի բարձր հրամանատարությունը նկատի ունենալով համատարած խուճապը և զորքի բարոյալքված վիճակը՝ հայտարարեց, թե հնարավորություն չի տեսնում կռիվը շարունակելու և որոշում է կայացնում նահանջել առանց կռվի: Ելույթ ունեցողների և ներկաների բացարձակ մեծամասնությունը կողմ էր նահանջին: Ահա այստեղ է, որ Գարեգին Նժդեհը արտասանում է իր հրաշունչ ճառերց մեկը.

<<Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնան. իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապես մեռած չի համարում, թող հետևի ինձ>>:1

Ճակատամարտից առաջ Նժդեհը կոչով դիմում է զինվորներին.

-Պատմական Գուգարք աշխարհի քաջորդինե՛ր, անտուն-անտերական հայ գաղթականներ, եկել է ժամը, որ մենք՝ Հայկ Նահապետի թոռներս, արժանին հատուցենք մեր նենգ ու դավադիր թշնամուն, որն այնպես անողոքաբար գերեզմանների վերածեց լեյսի և արդար վաստակի մեր սուրբ հայրենիքը: Անգութ թշնամին նորից իր սուրն է բարձրացրել մեր կյանքի վրա, մեր Աստծո վրա: հավատանք մեր ուժին, մեր Աստծուն: Ուրեմն հայե՛ր, եկեք միանանք հանուն սուրբ գործի, հաղթանակ տանենք մահի և արհավիրքի հանդեպ, Գուգարքի այս խոր նվիրական ձորը դարձնենք թշնամու գերեզմանը: Ի զեն հայե՛ր, ի մարտ:

Այս գերկարևոր, առանցքային և շրջադարձիկ պահի ամբողջ պատասխանատվությունը ճակատագրի բերումով ընկավ Նժդեհի վրա, որն էլ թուրքերի դեմ հայոց զորքի առաջին ճակատամարտին տանելով փայլուն հաղթանակ՝ կասեցրեց թշնամու հաղթարշավը, բազմապատկեց զինվորների և ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ:

Նժդեհի ամբողջ տաղանդը և գործունեությունը բացահայտվեց Զանգեզուրում:

Գարեգին Տեր Հարությունյանը Զանգեզուր եկավ 1919թ 2-րդ կեսին, երբ թուրք-ադրբեջանական զորքերը շրջապատել էին Զանգեզուրը: 33 տարեկան կապիտանին վստահվեց Զանգեզուրի ժողովրդական ուժերի հրամանատարությունը: 1919-1921թթ հանձն առնելով Զանգեզուրի ինքնապաշտպանության նվիրական գործի կազմակերպումը Նժդեհը ցուցաբերեց զինվորական բացառիկ տաղանդ և պետական գործչի որակներ: Սյունիքի հայությունը Նժդեհի ղեկավարությամբ , առանց դրսի օգնությամբ այդ տարիներին կարողացավ վարել իր պատմաստեղծ գոյամարտը՝ խուսափելով Արցախի և Նախիջևանի օրինակով Ադրբեջանին բռնակցելու ճակատագրից: Հայության համար ծանր այդ ժամանակահատվածում էր, որ մեծանուն հայը կյանք է կոչում <<Դավիթբեկյան ուխտերը>>, որոնց նշանաբանն էր <<Հանուն հայրենիքի՝ Դավիթ Բեկաբար>>:

Սյունեցիների ինքնապաշտպանական ոգին բարձրացնելու նպատակով նա սկսում է կրել Դավիթ Բեկի հագուստը:

1920թ. օգոստոսի 25-ին Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորներն ուխտեցին պատմական հերոս Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի անունով՝ <<Հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատությանն, հրամանատար Նժդեհին և կռվել մինչև վերջին շունչը>>:

Նժդեհը թշնամու դեմ տանում է մի շարք հաղթանակներ: Կռիվներից առաջ Նժդեհը վաշտերին դիմող մարտակոչում ասում է՝<< Հառաջ , իմ քաջեր մեզ հետ է Աստված և Դավիթ Բեկի վրիժական ոգին>>:

Այս հաղթանակները մեծ փառք են բերում Ղափանի ուժերի երիտասարդ հրամանատարին: Նա պարգևատվում է << Պատվո սրով>> հետևյալ

մակագրությամբ՝<<Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց երկրորդ Դավիթ Բեկ, իսկ թշնամին <<Աժդահ փաշա>> ,թող այս սուրը հիշեցնի հերոսին, որ Նժդեհը և Ղափանը անբաժան են հոգով>>:

Կարճ ժամանակամիջոցում Նժդեհը դարձավ կենդանի լեգենդ Զանգեզուրի լեռներում: Սիրելի հրամանատարին ճանաչում են բոլորը: Նա շրջում էր գյուղերում, հայրենակասիրական ելույթներով և զրույցներով ոգևորում ժողովրդին: Ոգեկոչում էր

Դավիթ Բեկի և Թորոս իշխանի սխրանքները: Ժողովրդի մեջ ներարկում էր այն գաղափարը, որ հայրենիքը սիրո և նվիրումի կարիք է զգում հատկապես այն ժամանակ , երբ վտանգված է նրա անկախությունը:

34 տարեկան հասակում Գարեգին Նժդեհը ուներ գնդապետի աստիճան, հերոսի փառք և Ադրբեջանի կառավորության կողմից 3 մլն գնահատված գլուխ: Այս պայմաններում թվում էր թե նրան այլևս ոչինչ պետք չէ, և նա ենթարկվեր իրեն Զանգեզուր գործուղված հրամանատարությանը և հերոսի դափնեպսակով վերադառնար: Սակայն այդպես չեղավ, որովհետև նա դարձել էր ժողովրդական առաջնորդ և իրեն պատասխանատու էր զգում նրա հետագա ճակատագրի համար: Նրա հուզիչ խոսքերից հետո կապարգողթի գյուղացության 2-րդ ժողովը և Ղափանի ազգային խորհուրդը 1920 թ հուլիսին որոշեցին կռվել կարմիր զորքերի դեմ, քանի որ նրանք ցանկանում էին Զանգեզուրը միացնել Ադրբեջանին:

Սակայն Նժդեհը հասկանում էր որ այս պայմաններում դժվար էր հաղթել, բայց չեր կարող զիճել: 1920թ օգոստոսի 30-ին ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին գրած նամակում հիշեցնում է.<< Մի լքեք գերազանցորեն հերոս ու հայրենասեր ժողովրդին, մի զիջեք նրա սրբազան երկիրը, որն իր ծոցի մեջ տեղ է տվել մեր պատմությունը զարդարող հերոսներից ամենամեծին՝ Դավիթ Բեկին: Ոչ մի զիջում: Զիջումը գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք... թողոժեք մեզ բախտի կամքին, մենակ, անկախ: Մենք որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել գիտենք: Աստված և իմ սերը իմ հանրապետության հետ>>:

Ժողովրդի շուրթերից անպակաս էր.<<Ղափան երկիր ազատ, անկախ>> երգը:Այս երգը նրանք հաճախ երգում էին, որպեսզի մոռանան սննդամթերքի և ռազմամթերքի բացակայությունը, իրենց վիճակի ծանրությունը: Սակայն բոլորը չէին, որ այդպես էին մտածում: Զանգեզուրի հայ բոլշևիկների կարծիքով հայ ժողովրդի անկախությունը գալու է ռուսական հյուսիսից:

Դժվար օրեր էին Զանգեզուրի համար: Ժողովուրդը գտնվում էր երկընտրանքի մեջ: Մի կողմից հայ երիտասարդ բոլշևիկներն էին, որոնք հազար ու մի անգիր

արած բաներ էին ասում ժողովրդի անունից. մյուս կողմից սիրված հրամանատարը, որը ուխտել էր կռվել<<Դավիթբեկաբար>> մինչև վերջ:

Նժդեհի համար էլ շատ ծանր էր որոշում կայացնել, բայց նա չէր կարող թողնել պայքարը, նա գիտեր, որ պայքարը չշարունակելու դեպքում ինչ ճակատագիր է սպասվում Սյունիքին:

Նժդեհը Խուստուփի փեշերին թողնելով երեսուն վաշտապետերին ու սպաներին՝ ինքը անցնում է Գենեվազ: Մեկնելուց առաջ գյուղերին ուղարկում է հետևյալ կոչը.՝

Ղափանցիներ, ես Դավիթբեկյան ուխտին հավատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրավոր ու ավելի հպարտ քան էի: Այժմ ես լիզում եմ քո թշնամու ինձ հասցրած վերքերը և սպասում եմ քեզանից խնդրածս վարպետներին, որ գան, շուտ գան, կոպիտ գործիքներով հանեն իմ աչքերը, կուրացնեն ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Դու ուզում ես այն, ինչ ուզում էր թշնամին: նա գոհ է քեզանից, անչափ գոհ: Ադրբեջանը հոգնեց իմ գլխին սպասելուց: Փոքր գումար չէ երեք միլիոնը, ստացիր և գործի անցիր:

Այնպես չէր, որ Նժդեհը չէր հավատում Ղափանցիներին, նա պարզապես ժողովրդին հետագա պայքարին տրամադրելու նպատակով դիպչում էր նրա զգացմունքներին:

Նժդեհի կոչը ուներ հետևյալ շարունակությունը.

-Լսիր, մի ավելորդ գուցե և վերջին անգամ, նա դիմում է քեզ, խոսում է քեզ հետ: Նեղ օրերին դու կանչեցիր ինձ և ես հասա քո կանչին

-Ասա ժողովուրդ, այն օրերից քո երկրում մնաց մի բարձ սար, մի քար,որի վրա ես դրած չլինեմ իմ հոգնած գլուխս:

Ասա՛ , դու ինձ տեսա՞ր մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ:

Ասա՛, մնաց մի բան, որ խնայեի, չզոհաբերեի քո ազատության, քո փրկության, քո փառքի համար: վայ քեզ ժողովուրդ, ինչ պատասխան պիտի տաս Աստծուդ, խղճիդ , պատմությանդ:

Այս կոչերը կարդալիս մարմնովս սարսուռ է անցնում, և հոգիս լցվում է ջերմ հայրենասիրությամբ: Եվ համոզված եմ , որ Նժդեհի զինվորները լսելով նրա կոչերը և տեսնելով նրա պայքարը, միշտ եղել են նրա կեղքին և պատրաստ են եղել միջև վերջ պայքարին:

Գարեգին Նժդեհը հաշվի առնելով պարենի և հացահատիկի չգոյությունը, վարչական և զինվորական մարմինների միջև ծագած անհամաձայնությունը, միաժամանակ խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որին կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը, և հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշևիկյան ղեկավարությունը իր 1921թ հունիսի հռչակագրով Սյունիքը հայտարարում է կցված մայր երկրին, Լեռնահայաստանը տեղի տվեց Խորհրդայնացման առաջ:

Թողնելով Զանգեզուրը Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստեց լեռնահայությանը, որ ինքը ընդմիշտ չի հեռանում և պիտի վերադառնա, եթե Երևանի փոխարեն բաքուն լինի Սյունիքի տերը: Իսկ խորհրդային հայաստանի հեղկոմին ուղղած դիմումը սպարապետը ավարտում է սաստող տողերով.<<Եթե չկատարվի հայ գյուղացիության պահանջները, դուք գիտեք , որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորով վերագրավել Լեռնահայաստանը>>:

Խորհրդային հայաստանի Ղեկավարությունից ստանալով Սյունիքը Հայաստանի կազմում թողնելու երաշխիքները, Նշդեհը 1921 հոիլիսի 9-ին անցնում է Արաքսը և մեկնում Թավրիզ:

<<Հայաստանից հեռանալիս հետս վերցրել եմ Արաքսի հայկական ափում զինվորներիս կողմից զարնած վագրի մորթին: Իմ միակ վարձատրությունը, Ջալալ փաշայի դաշյունը՝ իմ միակ պատերազմական ավարը: Պարտություն չտեսած Սյունաց դրոշակը՝ թող դա դրվի կրծքիս վրա, գերեզմանիս մեջ , և մի Հայկազյան բառարան՝ իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ: >

Գարեգին Նժդեհը 1919-21թթ վարելով Զանգեզուրի ազատամարտը՝ երբեք պարտություն չի կրել:Իր ռազմաքաղաքական բոլոր մեծ գործերը, Ղարաքիլիսայի ճակատամարտից մինչև ինքնավար Սյունիքի և Լեռնահայաստանի հանրապետության կերտումը, կատարել է 33-35 տարեկանում: Նրա ռազմական և քաղաքական հանճարը պայմանավորված է նաև հռետորական տաղանդով, որի շնորհիվ կարողանում էր զանգվածներին ոգի ներշնչել և առաջնորդել ամենաանհավատալի և անիրագործելի թվացող սխրանքների: Այս իմաստով Գարեգին Նժդեհին կարելի է դասել 20 –րդ դարի համաշխարհային հռետորական արվեստի մեծագույն դեմքերի շարքը:

Հետազոտական աշխատանքը այս թեմայով գրելը պայմանավորված էր ինչպես նշել եմ արդեն այդ թեմայի արդիականությամբ: Սակայն կա նաև այլ

հանգամանքներ:Նախ ասեմ որ ինձ համար պատմական անհատների շարքում հատուկ տեղ է գրավում գարեգին Նժդեհը, որի դերը անուրանալի է: Նշեմ նաև որ որոշ ժամանակ Գարեգին Նժդեհի աճյունը պահվել է Կոտայք գյուղում: Կոտայք գյուղը Բանասիրության պրոֆեսոր Վարագ Առաքելյանի ծննդավայրն է: Վարագ Առաքելյանի կազմակերպչական ջանքերով է իրագործվել Գարեգին Նժդեհի աճյունի տեղափոխումը Վլադիմիրից Հայաստան և 1983-ից 1987թ աճյունը պահվել է Կոտայք գյուղում Վարագ Առաքելյանի ամառանոցում, ապա ամփոփվել է աճյունը Սպիտակավոր վանքում Խուստուփ լեռան լանջին:

Հետազոտական աշխատանքը ավարտենք Աշոտ Գևորգյանի խոսքերով՝

Այստեղ են Սյունիքի մոտ գտնվող զանգերը, որոնք զանգում են մահացու վտանգի պահին: Այստեղ՝ Զանգեզուրում երկինքն այնքան մոտ է, որ ձեռքդ մեկնես, երկնքից աստղ կպոկես: Տարբեր դարերում հենց Սյունիքում է լուծվել Հայաստանի լինել – չլինելու հարցը: Եվ ոչ միայն:

Կրթադաստիարակչական նշանակությունը

Հայ ժողովուրդը միշտ հիացրել է իր պատմությամբ, դարերով կռվել է իր ազատության և անկախության համար: Եվ այսօր մեր անկախության և պատմական տարածքների ամբողջականության համար պատասխանատու ենք ոչ միայն մենք, այլև մեր սերունդները, որոնց դաստիարակությունը վստահված է մեզ: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ ազգային ազատագրական պայքարի, մասնավորապես՝ հայոց պատմության հերոսական էջի՝ Զանգեզուրի գոյամարտի ուսումնասիրությունը խորհրդի և դասերի ընկալումից զատ ունի կրթադաստիարակչական մեծ նշանակություն:

Մեր բազմադարյան պատմության հերոսական դրվագների ուսուցումը, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհությունը օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց, կմղեն հերոսությունների:

Այսօր յուրաքանչյուր աշակերտ ոչ միայն ոգեշնչվում է Նժդեհի ռազմական տաղանդով և խիզախությամբ, այլև դաստիարակվում է Նժդեհյան գաղափարներով: Իսկ Նժդեհը իր աշխատություններում շատ մեծ տեղ է հատկացրել հայրենասիրությանը:

Ավարտենք Նժդեհի խոսքերով՝

Հայրենապաշտական դաստիարակություն-ահա մեր փրկության խարիսխը:

Գրականություն

1. Արմեն Սարգսյան<<Գարեգին Նժդեհ>> <<Համամարդ>> Երևան 2020թ

2.Ռաֆայել Համբարձումյան<<Գարեգին Նժդեհ>> Երևան 2003թ

3. Կտրիճ Սարդարյան<<Պատմություն և իրականություն>> Երևան 1991թ